Հավելված՝

Գյումրի համայնքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 12-ի
N 174-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար,

3) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

6) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար,

7) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

8) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտներիվերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտբություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակությոան փոփոխություն՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակությոան

փոփոխություն, ապա , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի կամ շենքերի շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ստորգետնյա)շինարարություն կամ սենքերի գործառական նշանակությոան փոփոխությոուն ,ապա, որոշման իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն բաժնի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **200 (երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար**,**

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **9000 (ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ.**

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **1500 (մեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտրի առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

7. Համայնքի ավագանու կողմից սահմանված համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **100 (մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ**,

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **1250 (մեկ հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) մեկ շաբաթվա համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ**,

4) մեկ ամսվա համար՝ **12500 (տասներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ**,

5) մեկ տարվա համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ **75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) բաղնիքների (սաունաների) համար՝ **300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) խաղատների կազմակերպման համար՝ **1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **4000 (չորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

3) այլ արտաքին գովազդի համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մինչև ներառյալ երկու թերթերի համար՝ **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**, երեքից ներառյալ հինգ թերթերի համար՝ **2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**, վեցից ներառյալ տաս թերթերի համար՝ **3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,** տասնմեկ և ավելի թերթերի համար՝ **5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

Տեղական վճարների դրույքաչափեր

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է **10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Գյումրի քաղաքի վարչական տարածքում ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարը սահմանվում է՝

1) մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար,

3) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **35000 (երեսուն հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,**

5) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

3. Գյումրի քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ **15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

4. Գյումրի քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար վճարը սահմանվում է՝ **30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

5. Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառուցապատողների միջոցներով շինարարական աշխատանքներ իրականացման ընթացքում, օբյեկտների հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով, շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարը սահմանվում է՝

1) պետական կամ պետականին հավասերացված ծրագրերի համար՝ կապալի պայմանագրային գնի 0.1% - ի չափով,

2) այլ կառուցապատողների համար,

3) նախահաշվային փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ նախահաշվային արժեքի 0.1% - ի չափով,

4) նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքներիտեսակներ» արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուի համաձայն հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի 0.1% - ի չափով:

6. Համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվում է **1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**